

Գաղտագողի Յուղարկատրություն...

Հ.Բ.Ը.Մ.-ի 1996 Թ. METAMORPHOSIS-Ը... ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ 100-ԱՄԵԱԿԻ ԹԱՂՈՒՄԸ

Յ առաջիկայ տարուան, 2006 թուի, Չատկուան կիրակի օրը կը զուգորդուի Հ.Բ.Ը.Մ.-ի հիմնադրութեան դարադարձին, 100-ամեակին (1906-2006 թթ.): Մեծ հիմնադիրներու եւ Մեծ պահպաններու շնորհիւ գոյատեւած ու բարեգործած այս Մեծ ՄԻՈՒԹԵԱՆ անդամներուն ու համակիրներուն միտքերը կը տանչուին՝ «Մեյգոնեան»-ի թրքահաճոյ փակումին հետեւանքով, ՄԻՈՒԹԵԱՆ ապագային ու հարիւրամեակին շուրջ, շարք մը մտայլիկ հարցումներով... 2006 թուականի Չատկին, ՄԻՈՒԹԵԱՆ 100-ամեակին, «Մեյգոնեան»-ը վերաբացուած պիտի ըլլայ, թէ՛ աղեկարարող դրոշմը ու բարիկացայտ պարապարտեցող փոփոխականներու անոր խաւարումն ու անփառունակ վախճանը: 2006 թուականին՝ «Մեյգոնեան»-ի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի թաղմանական արարողութեան՝ ներկայ պիտի գտնուինք, թէ՛ ՄԻՈՒԹԻՒՆԸ վերականգնած պիտի ըլլայ իր սկզբնական կարգավիճակին եւ օժտութեան՝ լուսանորիչներէ կազմուած Կեդրոնական Վարչութեամբ մը, որ վերաբացած պիտի ըլլայ «Մեյգոնեանի Լույսի Տաճար»-ը, որպէսզի այն առաւել ամրապնդուի, օգտուելով իր առջեւ բացուող նոր հեռանկարներէ՝ կիպրական կառավարութեան հոգածու վերաբերմանը, Կիպրոսի Եւրոմիութեան անդամակցութենէն եւ հայերէն լեզուն «ուանդակ» (հիւ՛ն բայց դեռեւս ապրող...) ու երոզական լեզուներու կարգավիճակ ձեռք բերելու պատմական առիթէն...: Մինչեւ 2006 թ. Չատիկը, Հ.Բ.Ը.Մ.-ի վերին իշխանութիւնը ապատգրուած պիտի ըլլայ՝ սակաւապետական (օլիգարխիներու) քիթ-ին մենատիրութենէ: Մեծ ՄԻՈՒԹԻՒՆԸ ապագայուն պիտի ըլլայ՝ օտարին կողմէ գործադրող եւ սարքանքի ձմբով Ինժեներներ... վերին իշխանութեան բնաւորատրութենէ՛ն անոր 1996 թ. «պետական հարւած»-ին տրուելիք հաւատարմի, հաւատարմի ու անորմատր անդամակազմին հակահարուածովը...: Բանի որ՝ ՄԻՈՒԹԵԱՆ վերին իշխանութիւնը դաւով բնագրուած այս բացարձակաւորները, Տոյարի հասարակ երկրպագուներ՝ իրենց ԱՄԵՐԻԿԵԱՆ սկիզբներով, անկարող են ունենալու ՀԱՅԿԱՆ տեսական... եւ իրենց ԱՄԵՐԻԿԵԱՆ հաշուիչ մեքենաներով՝ անկարող են ճշգրտորէն հաշուելու ՀԱՅԿԱՆ շահն ու վնասը...: Իրենց հոգիներուն մէջ Արարատ չունեցող, Մեքսիկայեան լեզուին ու Հայոց Պատմութեան անծանօթ այս ինքնապիտան հարուած *փուչիտները*՝ իրենց աներկեան *agenda*-ին մէջ, նախապատուութիւնը տուին Երեւանի ԱՄԵՐԻԿԵԱՆ համալսարանին, փոխարէնը՝ Հայ Գասի պահպանուէր Տարգիր Հայրութեան ՀԱՅԿԵՐԱՆՄԻՒՄ «Լույսի Տաճար Մեյգոնեան»-ին: Վերջապէս, մինչեւ 2006 թուականի Չատիկը, գտնուած պիտի ըլլայ՝ Մեծ ՄԻՈՒԹԵԱՆ հաւատարմի եւ «ուխտեակ պիտուր»-ներու ջոկատներ, որոնք վճռականութիւնը ունեցած ըլլան սրբազնելու 1996-ին գործուած մեծ սխալը, ՄԻՈՒԹԵԱՆ պարտադրուած metamorphosis-ը՝ «Միութեան» կարգավիճակէն «Հիմնադրում»-ի կարգավիճակին..., եւ որոնք կարողացած ըլլան վերականգնելու ՄԻՈՒԹԵԱՆ համապատասխան ժողովուրդներուն հանգամանքը, դատական հետապնդումի ենթական դարձնելով՝ ՄԻՈՒԹԵԱՆ Ծրագիր-Կանոնագրի չարափոխութեան հեղինակները, որոնք յետապահին գործեցին «Մեյգոնեան»-ը փակելու ազգաբանի ուժերը ապատրէս:

նիքն ԸՆԹԱՅԱՒԱՐՏ Կեդրոնական Վարչութեան սեղմ քիթին... ստեղծելով սակաւապետական (oligarchic) *խուչոս* մը (junta) որ ՀԱՅՈՒԹԵԱՆԻ ԸՆ ԱՅՄԱՐԱՆԻ ԱՌՁԵԻ... ինչ որ հիմնովին կը հակասէ՝ բոլորին ծանօթ «Քարեգործական»-ին համապատասխան հանգամանքին ու ժողովրդավարական-ռամկական կազմակերպութեան ու անդամակազմին բնութագրերուն: 1996 թ. Նոյեմբեր 16-ին, Լուս Անձելըսի մէջ գումարւած 79-րդ Ընդհ. Ժողովին ընթացքին, իշխանութիւնը սարքանքով ու խաբէութեամբ բնագրուած այս *խուչոս* է հասա՝ որ նկրտեցաւ առնելու «Մեյգոնեան»-ը փակելու *աներկեակութեանն* ու *թրքահաճոյ* ուժերը... ապատրէսն եւ յանձնապատասխանութեն:

Հ.Բ.Ը.Մ.-ի այս թալալգոր անկումն ու անոր ՀԱՅԿԱՆ տեսականին կորուստին գործընթացը սկսաւ ըսինք այն օրէն՝ երբ անոր վերին իշխանութեան արտոնքի բացմեցաւ նախ՝ Լուիս Սիմոն... (սինակն ապրեցողութեան ենթակա) եւ ապա՝ այժմեականացուած անոր փորձ պիտակին տակ, նորապատական վարի դրամատիրութիւնը եւ Ա.Մ.Ն.-ի նոր-պահպանողականներու (neocon-ները) վարքագիծը որդեգրած Մեք Պեր Պերակեանը (դարձուած սինակն ապրեցողութեան ենթակա... իր աշխատած փաստաբանական գրասենեակին սինակն անձնակազմին ու պաշտօնակիցներուն բերումով...):

Այս վատառողջ մթնոլորտին հետեւանքով, երկի տեղական ու նոյնիսկ *քաղաքի* մասնաճիւղեր ունեցող եւ համապիտոբանայ *ընտրովի մարմիններով* օժտուած ու ռամիկ ժողովուրդէն յարգուած՝ Մեծ Միութիւնը վերածուեցաւ ժողովուրդին խլուած, Նի Երթը՝ «փոխակերպ աշտարակ»-ին մէջ ներքաշուած տոկական ՀԻՄՆԱԳՐԱՄԻ մը, կամ՝ ԲՈՐՈՒՄՆԱՆՑՆԵՆԻ, ԹՐԱՍԹԻ կամ ԼԻՄԻՒԹՅԱՆ ընկերութեան մը, որ *նչ մէկ կայուն* անդամական մարմինն հետ, եւ *չի վաշելը անդամներու վատահոթեանն* ու *ուղիղակի* եւ *նչ այլ անուղիղակի* քուէն...:

Հ.Բ.Ը.Մ.-ի metamorphosis-ի այս գործընթացը (կերպարանափոխումի, այլակերպումի եւ այլանդակումի) իր լրումին հասաւ 16 Նոյեմբեր 1996 թուին, Լուս Անձելըսի մէջ գումարուած 79-րդ Ընդհ. Ժողովին ընթացքին, երբ չարափոխութեան Հ.Բ.Ը.Մ.-ի Ծրագիր-Կանոնագրի տրամադրութիւնները եւ կերանադրական սկզբունքները: Անցող 9 երկար տասնամեակներու տեղութեան յարգուած Ծրագիր-Կանոնագիրը կոպտորէն եւ արմատականօրէն նենգափոխուեցաւ: Ոչ Մեծ Միութեան Մեծ հիմնադիրները, ոչ իրերպարարը Մեծ նախագահները եւ ոչ այլ մայր Ծրագիր-Կանոնագիրը երբեք չեն նախատեսել, եւ ՉԷԻՆ ԿՐՆԱՐ ՆԱԽԱՍՏԵՍԵԼ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՅԼԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ: ՉԷԻՆ ԿՐՆԱՐ ՆԱԽԱՍՏԵՍԵԼ նման այլակերպում մը՝ առանց փոփոխելու անուր «Քարեգործական»-ի: Այդ անուան չորս բառերն են՝ ՀԱՅԿԱՆ, ԱՄԵՐԻԿԱՆ, ԸՆԳ-ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ...: 1996 թուականի չարափոխումով, այս չորս բառերը կորսնցուցուած են իրենց սկզբնական մարտաւարքը իմաստն ու նշանակութիւնը, եւ վերածուած՝ իրենց *հակահիշներուն*: Բոլորին նախապէս ծանօթ «Քարեգործական»-ը այսօր 1996 թ. Նոյեմբեր 16-էն ստղին, ոչ *«հայկական»* է, ոչ *«քարեգործական»*, ոչ *«ընդհանուր»* եւ ոչ այլ՝ «միութիւն»: Այլ *աներկեակ* է, *քաղաքական* օտար նպատակի կը ծառայէ ինչպէս է պարագան Ս.Տ. Այդ-ի..., *քիթ-ային* է եւ *հիմնադրամային*: Այս այլանդակումը *անուանական* չէ՛ այլ՝ *կոտորակային* եւ *էրթեական*...:

Մինչեւ 79-րդ Ընդհ. Ժողովի գումարումի թուականը, Հ.Բ.Ը.Մ.-ի Ծրագիր-Կանոնագիրը Միութեան Կեդրոնական Վարչութիւնը ընտրելու իրաւունքը վերապահած էր՝ անդամական ընդհանուր ժողովին մասնակցող տարբեր երկիրներու շրջանակներէն *ընտրուած* ու *իշխողուած պատգամաւորներուն*: Ինչպէս է պարագան բոլոր դեմոկրատական կազմակերպութիւններուն, որոնք հաւատարմի կը նման դեմոկրատիայի տիպէրակաւորէն ճանաչուած սկզբունքներուն եւ կանոններուն: Սակայն, Մեծ Միութեան կեդրոնական իշխանութիւնը «պետական հարւած»-ով ձեռք անցրելու նպատակը հետապնդող քանի որ բախտաբաններն եւ հայկականօրէն ուժացածներն *քիթ-ը՝ գործելու ապատրէսն* ունենալու համար, նախապատասխանուած էր՝ 79-րդ Ընդհ. Ժողովին նախօրէին, յեղաշրջումը յաջողութեամբ պակելու համար, օգտուելով՝ Լուիս Սիմոնի կողմէ Միութեան շրջանակային ու նախանոր տեղական վարչութիւններուն մօտ յառաջացուած հիասթափութեան, յուսալքումի եւ անտարբերութեան ստեղծած «պարտ»-էն:

Այս տիպայիշատակ Ընդհ. Ժողովին մէջ, պատգամաւորները անակնկալի եկան՝ երբ «*փուչիտ*»-ները անոնց առաջարկեցին, Կեդրոնական Վարչութեան անդամներն ընտրութիւնը վստահիլ՝ նոյնիքն *ընթացա-*

ւարտ Կեդրոնական Վարչութեան անդամներուն...: Այսպիսով՝ «*փուչիտ*»-ները կ'ուզէին չարաչափի բարեմիտ եւ դեկադարութեան վրայ կոյր վատահոթին ունեցող պատգամաւորներու անուշադրութիւնը...: Եւ ցուալին այն է՝ որ այդ ճակատագրական պահուն, պատգամաւորներուն մէջէն չեն գտնուած արթնամիտներ, կասկածամիտներ կամ՝ անորմատրներ... բողոքելու եւ առարկելու համար այս հիմնական խախտումին ու հակադեմոկրատական առաջարկին դէմ: Չեն գտնուած նոյնիսկ բացատրութիւն պահանջող պատգամաւորներ...: Այսպիսով՝ նուիրագործուած է ընթացաւոր Կեդրոնական Վարչութեան անդամներուն անառարկելի հեղինակութիւնն ու կամայականօրէն գործելու ապատրէսները, առանց հարցապնդումի եւ առանց հաշուետուութեան:

Սակայն, հակադեմոկրատական ու *հակահիմնադրական սարքանքներէն* ու մեքենայութիւններէն եւ խաբէութիւններէն չեն կրնար բխիլ *կանոնական իրաւաստութիւններ*: Այլ, այս «պետական հարուած»-ը եւ անոր ճարպիկ հեղինակները ենթակա կը մնան դատական հետապնդումի նախ՝ Միութեան Ընդհ. Ժողովին առջեւ, եւ ապա՝ ի պահանջել հարկին, պատկան պետական դատաստանական իշխանութեան առջեւ՝ եթէ գտնուին ՄԻՈՒԹԵԱՆ հաւատարմի, արխապիտ ու վճռական անդամներու կորովի ջոկատներ, որոնք պատրաստակամութիւնը ունենան սրբազնելու գործուած ճակատագրական սխալը: Անոնք կրնան վերականգնել Մեծ Միութեան սկզբնական *կարգավիճակը*՝ որպէս ԸՆԳ-ՀԱՅՈՒԹԻ ՄԻՈՒԹԻՒՆ, իր ժողովրդավարական *ընտրովի ու համագաղտութեան հանգամանքովը*, վերջը դնելով ներկայի ապագայնս ՀԻՄՆԱԳՐԱՄԻ կարգավիճակին, որ Միութեան պարտադրուած է դաւով ու սարքանքով, հակահիմնական եղանակով եւ Ծրագիր-Կանոնագրի խախտումով ու հակադեմոկրատական եղանակով:

Ինչո՞ւ Կեդրոնական Վարչութիւնը դիմեց սարքանքի եւ խաբէութեան: Եթէ ան պարկեշտութիւն կը մտածէր՝ Միութեան 79-րդ Ընդհ. Ժողովի նախօրէին, այսպիսի *հիմնական* փոփոխութիւն մտցնել Ծրագիր-Կանոնագրին մէջ, պարտաւոր էր՝ բաւ կանոնի, Ընդհ. Ժողովի թուականէն նուազագոյնը վեց ամիս առաջ, իր այս առաջարկը բովանդակող *պատճառաբանում* ան *հիմնաւորուած* Շրջաբերական մը հաղորդելու բոլոր շրջանակներուն, բարեփոխութեան բանաձեռի նախագիծին հետ միասին, որպէսզի անպայման շրջանակներու տեղական ու շրջանակային ժողովները առիթը ունենային հանգամանօրէն քննելու այսպիսի ծանրակշիռ առաջարկ մը եւ որոշումի մը յանգելու, նախ քան պատգամաւորներու ընտրութիւնը, եւ որպէսզի պատգամաւորները՝ յստակօրէն իրազօրուած ներկայանային Ընդհ. Ժողովին: Ինչո՞ւ 1996 թ. ընթացաւոր Կեդրոնական Վարչութիւնը շեղեցաւ տիպէրականօրէն ընտրուած այս կարգէն: Ինչո՞ւ այդ վարչութեան պարագայիները անպարկաշիւ գտնուեցան պատգամաւորներուն նկատմամբ, պատճառը ոչխարի հոտի մը տեղ դաւելով: Ինչո՞ւ անոր դիմեցին շեղակի ու հակահիմնական ուղղին: Պատասխանը պարզ է՝ այլ պարզ է: Անոնք շատ լաւ գիտէին՝ որ ՄԻՈՒԹԻՒՆԸ այլակերպող ու այլանդակող իրենց առաջարկը *անընդունելի* պիտի ըլլար պատգամաւորներու շախշախիշ մեծամասնութեան համար: Իրապէս պատգամաւորները պիտի մերժէին հաւատարմեան քուէ տալ՝ ՄԻՈՒԹԵԱՆ դէմ առաջարկուած մահավճիռին:

Այս կեսին վրայ, հարկ է գեթ անցողակի ակնարկութիւն մը ընել՝ *արմատներէն հեռանալու* այն միւս metamorphosis-ին, որուն ենթակայ դարձաւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր ԺԹՊ. Պատգամաւորական Ժողովին (Նիկոսիա...): Այս ակնարկութիւնը կ'արդարանայ այն պատմական իրողութեամբ՝ որ Ռ.Ա.Կ.-ն էր, տասնամեակներու երկայնիքով, Հ.Բ.Ը.Մ.-ը պաշտպանողը *օտարտի ներթափանցումներէն*...: Բայց, *արմատներէն պարկեշտութիւններէն*: Ռ.Ա.Կ.-ն էր որ Հ.Բ.Ը.Մ.-ը կը պահէր՝ Պօղոս Նուպարի օրերէն գտնուած ազգային առողջ գաղափարականի ծիրին մէջ, եւ թոյլ չէր տար՝ սայթաքումն ու շեղումը, հեռացումը՝ այդ սկզբնադիրներէն, հայկականութեան ու հայրենասիրութեան արմատներէն...: Բայց, *արմատներէն հեռանալու* ա՛յս metamorphosis-ին մասին՝ այլ առիթով: Այս անցողակի ակնարկութեամբ մենք ուզեցինք՝ պարզապէս, մատնաշէլ այն՝ որ Հ.Բ.Ը.Մ.-ի ներկայ մահանքը վիճակի մատնուելուն մէջ, Ռ.Ա.Կ.-ի դեկադարները նոյնքան պատասխանատուութիւն կը կրեն որքան՝ Հ.Բ.Ը.Մ.-ի դեկադարներն ու շրջանային ու տեղական պատասխանատուները, եւ մասնաւորաբար՝ երկու կազմակերպութեան անդամ *մտաւորականները*..., որոնք մեծամասնութիւնը (բացի՛ սակաւաթիւ բացառութիւններէ, ինչպէս՝ Հայկաշէն Ուլուսեան, Գոկոս. Ազապե՛ն Նասիպեան-Էքիշեճեան եւ Հայկ Նազաբեան) խոյ ու մունջ կը ձեռնարկեն անորակե-

լի անտարբերութեամբ մը եւ ոչ պատուաբեր յարմարողականութեամբ մը. ծխական ստորագելիներ, որոնք մեծապէս կը նսեմացնեն մտաւորականի մը դիմագիծը:

Կիպրոսի Հանրապետութեան Եւրոմիութեան անդամակցիլը՝ բազմապատիկ աւելի ծանրակշիռ դարձած «Մեյգոնեան»-ի փակումը, մեզ պրկելով հայերէնը *երոզական լեզուի* կարգավիճակով օժտելու ոսկեայ առիթէն: Այսպիսի կարգավիճակի ձեռքբերումը մեծապէս պիտի քաջալերէր՝ ոչ միայն Կիպրոսի, այլեւ շատ մը ուրիշ պետութիւններու կառավարութիւնները եւ միջազգային կրթական-մշակութային կազմակերպութիւնները՝ նպատելու հայերէնի ուսուցումին ու տարածումին, երոզական համալսարաններէ ներս հայագիտութեան ամպլոններու ստեղծումին: Այսպիսի պարագայում մը մեծապէս պիտի սատարէր երոզական երկիրներու հայ համայնքներու հայապահպանումին ու հայակերտումին: Կիպրոս արդէն հայերէնը ճանաչած է որպէս *ուանդակ* (իմա՝ ինչ բայց դեռեւս կենդանի լեզու) *էթնոսիք* լեզու: Հոնագրիս հայերէնը կը նկատե որպէս *ազգային փոքրամասնութեան լեզու*՝ յարգելով ժողովուրդներու Իրաւանց Տիեզերական Հռչակագրի (ԱճՔ, 4 Յունիս 1976) 3օդ. 2-րդը, 4-րդը, 13-րդը եւ 15-րդը, որոնք պարտաւորութիւններու կը դնեն բոլոր պետութիւններուն վրայ՝ յարգելու ազգային փոքրամասնութիւններու մայրենի լեզուները՝ 3օդ. 13-րդը բառացիօրէն կը տրամադրէ՝ «*Անէն ժողովուրդը իրաւունք ունի խօսելու իր մայրենի լեզուով, պահպանելու եւ վարձագնելու իր մշակոյթը, այդպիսով՝ իր նպատար բերելու Մարդկութեան մշակոյթի հարստացումին*»: Միւս կողմէ՝ 3օդ. 15-րդը կ'արտօսէ՝ «*Անէն ժողովուրդը իրաւունք ունի մերժել ենթարկուիլ իրեն համար օտար եղող մշակոյթի մը պարտադրումին*»...: Կիպրոսի մէջ կանգուն պահպանուող «Մեյգոնեան»-ը լաւագոյն շահներ կը ստեղծէր՝ երոզական հարթակին վրայ, կայրերէնի ուսումնան՝ բարձրագոյն կրթութեան մակարդակի վրայ, որպէս *ուանդակ* *էթնոսիք* լեզու, եւ հետեւաբար՝ դառնալու *երոզական կարգավիճակ* ունեցող լեզու...: Սակայն, երբ Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդր. Վարչութեան *խուչոս* կ'որոշէ փակել «Մեյգոնեան»-ը, ԿՏԻՍԸ Կ'ԸՆԼԱՑ Կիպրոսի անդամական կապը հայերէն լեզուին հետ... եւ վատ օրինակ մը կ'ըլլայ երոզական միւս երկիրներուն համար:

Երեւանի Վայելի Բրիւսովի անուան լեզուաբանական վարժարանի *ռեկտոր* Գոկոս. Սուրեն Չոլեան, որ մասնակցած է Սթրասպուրի մէջ կայացած գիտաժողովին, որուն օրակարգի կէտն էր՝ «*Ազգային փոքրամասնութիւններու լեզուներուն պաշտպանութիւն*», բարձրադասակ կ'ահագնագէ՝ «*Եթէ մենք մտածում ենք երոզական հայերէնի նոր կարգավիճակի մասին, պէտք է երոզացիների համար (պայն) ստրվելու պայմաններ ստեղծենք: Այդ հարցում մենք բաւականին չեն ենք՝ դրս մասին է վկայում: Մեյգոնեան վարժարանի օրինակը* (փակումը): *Իմ որպէս Հայաստանի ներկայացուցիչի եւ Կիպրոսի ներկայացուցիչի յուզում էր այն հարցը, թէ վստահուած են Կիպրոսի միջազգային պարտաւորութիւնն ու կրթական քաղաքականութիւնը*... (Մեյգոնեանի փակումով): Եւ ի՛նչպէս՝ «*Կիպրոսի իշխանութիւնների համար Մեյգոնեան վարժարանը բաւականին զգայուն թեմա է. նրանք շահագրգռուած են այդ հաստատութեան պահպանմամբ եւ նոյնիսկ մտադիր են ստեղծել հայագիտական կենտրոն: Կան գաղափարներ՝ հայերէնը դարձնելու բարձրագոյն կրթութեան լեզու, Կիպրոսի համալսարաններում բացելու հայագիտութեան ամպլոններ: Չրկուելով Մեյգոնեան կրթական Հաստատութիւնը... նախ՝ հայ երեխաներն հնարաւորութիւն չեն ունենայ մայրենիով միջնակարգ կրթութիւն ստանալու, եւ ապա՝ կը սահմանափակուի համալսարանական հայագիտութեան ամպլոնների ստեղծումը*»:

Այսօր՝ դաւադրաբար, ժողովուրդէն խլուած ու ՀԻՄՆԱԳՐԱՄԻ գոց ստիպի վերածուած երկի բարեփոխուած Հ.Բ.Ը.Մ.-ի *ինքնակոչ* Տէր-Տնօրէնները կը հասկնան՝ արդեօք Գոկոս. Սուրեն Չոլեանի կնչեցուցած այս բարձրադասակ ահապահին իմաստն ու տարրութիւնը: Եթէ անոնք անատակ են կամ բթացած՝ հասկնալու համար, Հայաստանի եւ Հայաստանեայ Առաքելական Եկեղեցու դեկադարները կրնան շարունակել իրենց լուստեան դաւադրութիւնը, ձեռնապահութիւնն ու անուղղակի մեղակցութիւնը իր ուժերին մէջ: Վերջապէս, Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Ռ.Ա.Կ.-ի հաստատու անդամական շարքերը թոյլ պիտի տան Հ.Բ.Ը.Մ.-ի եւ «Մեյգոնեան»-ի թաղմանական այս գաղտագողի արարողութիւնը: Հայերը կորսնցուցած են՝ իրենց հոգիներուն մէջ, Արարատի պատկերն ու խորհուրդը...: